№ 265 ՀԻՆԳՇԱԲԹԻ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 265

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ

Ա3-ՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵ

12և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կօպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կացնել փոխադրական բանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1914 թ.) ՄԻԱՆՈՒԱԳ կամ ՄԱՍ-ՄԱՍ վճարած կունենան 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան ԶՐԻԱԲԱՐ հետեւեալ գրքերից ՄԷԿՆ ՈՒ ՄԷԿԸ.

1) Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.

Այդ գրքի մէջ զետեղված են Գր. Արծրունու այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։

2) Վրթանի (Ա. Քալանթարի) Մանրանկարները, I և II հատոր։

«Մանրանկարները» ամփոփում են իրանց մէջ հայկական հասարակական կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւններ։

ԱՂԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Արտասահմանեան բաժանորդները պէտք է ուղարկեն գրքերի ճանապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“. Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

„ՄՇԱԿԻ“ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան դրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԻՐԱՑԼԵԱՆ ԱԼԻԽԱՆԵԱՆԸ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր այն անձերին, ընկերութիւններին և հիմնարկութիւններին, որոնք իրանց ներկայութեամբ կամ գրութիւններով բաժանեցին իրան հասած ծանր վիշտը իր ամուսնու՝

Նադեժդա Ալեքսանդրովնա ԱԼԻԽԱՆԵԱՆԻ

մահվան առիթով։

1099. 1—1

Նունէ Թոսոմեան Շախենց իր զաւակներով խորին վշտով յայտնում են ազգականներին, բարեկամներին ու ծանօթներին թանգագին ամուսնու և հօր՝

ԲԱԳՐԱՏ ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ

ՇԱԽԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 22-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 28-ին, առաւօտեան ժամը 10½-ին հանգուցեալի բնակարանից (Շէյլովնիկովսկայա և Կատուչէնսկայա փող. անկիւն, № 2—20, ս. տ.) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

1095. 1—1

Հայ Գրողների Կովկ. Ընկ. Վարչութիւնը յայտնում է իր գիտութիւն Ընկերութեան անդամների և յարգելի հայ հասարակութեան, որ ԱՅՍՕՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԵՐԵԿ. Ժ. 8-ին նշանակված է Ընկերութեանս

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԶՈՐՐՈՐԴ ԵՐԵԿՈՅԹԸ

կը դասախօսէ ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԸ

«ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ մասին»։

առ. Դահլիճը բաց է ժամը 7-ից։ 1096. 1—1

Առաջնակարգ ցիրկ ԵՂԲ.

ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր, հինգշաբթի, նոյեմ. 28-ին չեղած հետաքրքրական ներկայացում։ Այսօր ըմբշամարտի նախագիրքին օրն է։ Այսօր տեղի կունենայ Իվան Կայինի և Վախտուրօվի վճռական և վերջին մարտը։ Կայինը պայման է դրել, որ եթէ ինքն յաղթվելու եղաւ, իսկոյն և եթէ կը շարունակէ ըմբշամարտել Վախտուրօվի հետ առաջվէյցարական սիստէմով, այն է՝ զօտեմարտով, և դրա համար նա իր կողմից 100 ր. մրցանակ է դնում յօգուտ յաղթողի։ Այնուհետև կըմբշամարտեն՝ Ցիպլօ—Սաբատիէի հետ, Կօպէէրը—Քանսօնագի հետ։

Ներկայացման սկիզբը ժամը 8-ին, ըմբշամարտի սկիզբը ժամը 9½-ին, իսկ ներկայացման աւարտը ժամը 11-ին։

Թերլինի համալսարանի ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Վերադառնալով արտասահմանից վերանորոգից ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ՈՐՔԱԼԻՔԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՈՏՕՐԱԿՈՎ. Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՐԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՀՎԱՌՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՀՐ։ Бебутовская 23, тел. 7—92.

(ա.օ.) առ. 977. 100—23

ՓՈՐՁԵՑԷՔ ԾԽԵԼ ՆՈՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ ՀԱՅԿԱ

„ԿՕՆԿ. ԱՕՏՄԷ“

ԹԻՖԼԻՍ

20 հատը 6 կ., 10 հատը 3 կ.

(հ.կ.) առ. 1094. 10—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԱՆ

Այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 28-ին Հայոց Դրամատիկ. Ընկ խումբը կը ներկայացնէ

ՏՐԻԼԲԻ

Դրամա 5 գործ. հեղ. Դէլի, թարգմ. Ե. Աբէլեանի։

Մասնակցում են.—տ. տ. Աղամեան, Ցասմիկ, Գուլազեան, պ. պ. Ալլահվերդեան, Ազարեան, Ցարութիւնեան, Բերոյեան, Մանուէլեան, Մուրադեան, Օվի-Ահարոնեան, Թաշճեան, Տէր-Առաքելեան և ուրիշներ։

Ռէժիսօր՝ Ա. Արմէնեան

Սկիզբը երեկ. ժամը 8-ին։

Տոմսակները 1 ր. մինչև 30 կօպ.։

Հիւրերը, ըստ յանձնարարութեան, վճարում են—տղամարդիկ 50-ական կօպ., կանայք և ուսանողները 25-ական կօպ.։

առ. 1097. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ մանկական, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնացեալ (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ., մանկական հիւանդութիւն ունեցողներին երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ցեր. ժամը 3—4-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ե. Ն. Վեսելովզօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նօվիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ն. Զ. Ռամիկեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(հ.կ.) առ. 868. 100—6

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ա. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի)։

ԸՆՊՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը

Անկիւն Արաս-Աբարայայա հրապարակի և Լերմոն ասվակայա փողոցի, № 1.

(հ.հ.) առ. 679. 74—32

ԲԺԻՇԿ

Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՑԻՆ հիւանդութիւններ։
(Ճառանձն. կրծքի, թոքախտի և արեան պակասութեան)

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր՝ (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը

Դրաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից)

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնը հարկ է համարում յայտնել, որ ինչ-ինչ նկատումներով փոխելով իր նախկին որոշումը, տալ իբրև պրէմիա «Մշակի» 1914 թ-ի տարեկան բաժանորդներին «Տպագրութեան արուեստը եւ Հայը» գիրքը, դրա փոխարէն որոշել է տալ իբրև պրէմիա հետեւեալ երկու գրքերից մէկն ու մէկը՝ 1) Գր. Արծրունու աշխատութիւնները 1865 - 1871 թ. և 2) Վրթանի (Ա. Քալանթարի) Մանրանկարները I և II հատոր, ամփոփված մի գրքի մէջ։

Մինչև դեկտեմբերի 25-ը 10 ր. վճարողները կը ստանան երկրորդ գիրքը, իսկ նրանից յետոյ բաժանորդագրվողները՝ առաջին գիրքը։

ԹՈՂԷՔ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԱՐՏ

Պոլիտեխնիկումը որտեղ պէտք է լինի, Նաւթլո՞ւղ թէ Սաբուրթալո—ահա մի հարց, որ սաստիկ զբաղեցնում է Թիֆլիսի մամուլի մի մասը մինչ այն աստիճան, որ նա այդ հարցին տալիս է նեղ ազգայնական, շովինիստական բնաւորութիւն, որից պէտք էր խուսափել այդպիսի մի կարևոր հարցում։

Կովկասը անհրաժեշտ կարիք ունի մի բարձր կրթական հաստատութեան։ Այդ կարիքը վաղուց անյետաձգելի պահանջ է. բայց այդ պահանջին գոհացումն չէր տրվում բիւրոկրատական զանազան նկատումներով։ Վերջապէս ներկայ փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի լուսամիտ վերաբերմունքի և աջակցութեան շնորհիւ, այդ պահանջը իրագործվելու շաւղի մէջ մտնելով, որոշվեց հիմնել Թիֆլիսում պոլիտեխնիկում։ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, որ մեծ խթան տուեց այդ հարցին, որոշեց շինել պոլիտեխնիկումի շինութիւնը քաղաքի Նաւթլուղի մասում, ուր նա ունի ազատ հողերի մեծ քանակութիւն։ Այդ հողերի մի մասը—200 դեսեատին—յատկացնելով շինութեան և նրա պարագաների համար, մնացած մի մեծ մասը պէտք է վաճառվի և վաճառման արդիւնքից կազմվի այն գումարը, որ հարկաւոր է պոլիտեխնիկումի շինութեան համար։ Սակայն մի ուրիշ տարր՝ վրաց ազնուականութիւնը՝ առաջարկեց պոլիտեխնիկումը հիմնել քաղաքի Սաբուրթալո, կոչված մասում, ուր հողեր ունեն վրացիները, ինչպէս նաև հայերը և ռուսները, նոյնպէս նուիրեց 200 դեսեատին հող։

Թէ որտեղ կառուցվի պոլիտեխնիկումը՝ Նաւթլուղ թէ Սաբուրթալո այդ հարցը ամենամի կարևորութիւն և նշանակութիւն չունի Կովկասի ազգաբնակութեան համար—ռուս, հայ, վրացի, թուրք—որ պէտք է օգտվի կրթական այդ բարձր հաստատութիւնից, ուղարկելով իր զաւակներին այդտեղ բարձր ուսումն ստանալու։ Հետևաբար այդ հարցից շինել հայկական կամ վրացական ազգայնական հարց՝ աւելի քան անտեղի է, քանի որ Շուշուց, Երևանից, Գանձակից, Վլադիկավկազից և այլ տեղերից եկած հայ, ռուս, թուրք, վրացի երիտասարդների համար միևնոյն է, թէ պոլիտեխնիկումը որտեղ լինի՝ Նաւթլո՞ւղ թէ Սաբուրթալո։

Սակայն մամուլի մի մասը, գլխաւորապէս վրաց թերթերը, որոնք պրոպագանդա են մղում յօգուտ Սաբուրթալոյի, բոլորովին անտեղի կերպով քարոզում են այն միտքը, թէ իբր Նաւթլուղի կողմնակիցների մէջ պէտք է տեսնել հայկական ագրեսսիվ հայրենասիրութիւն և ձգտումն հայերի կողմից՝ վանել վրացիներին։

Որպիսի՞ անհեթեթութիւն։ Ի՞նչ կապ ունի հայ ժողովուրդը, նոյն իսկ Թիֆլիսի հայ ժողովուրդը, դեռ չը խօսած գաւառի հայ ժողովրդի մասին, Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորների կամ այն հայերի հետ, որոնք Նաւթլուղում հողեր ունեն։ Աւելի արդարացի չէ՞ լինի հարցը դնել բնական շրջանակի և կերպարանքի մէջ և ընդունել, որ կազմված է երկու հոսանք Թիֆլիսի մէջ, մինը՝ այս և այն պատճառով կամենում է պոլիտեխնիկումի շինութիւնը տեսնել Նաւթլուղում միւսը՝ դարձեալ այս և այն պատճառով՝ Սաբուրթալո կոչված տեղում։

Բուն ժողովուրդը, լինի նա հայ, վրացի, ռուս, թուրք, ոչ մի առնչութիւն չունի Նաւթլուղի կամ Սաբուրթալոյի հետ և ոչ մի օգուտ, շահ առաջինից կամ երկրորդից։ Նրան պէտք է միայն պոլիտեխնիկում։

Ապա պոլիտեխնիկումի հարցը պէտք է քննել միայն տեղի յարմարութեան և ֆինանսական յարմարութիւնների տեսակէտից, մանաւանդ վերջին տեսակէտից։ Երևակայեցէք, որ Սաբուրթալոն ամենայարմարն է մի քանի տեսակէտներից, իսկ այդտեղ կառուցանելը անհամեմատ աւելի մեծ ծախքեր կը պահանջի, բայց եթէ Նաւթլուղում շինվի, ծախքը աւելի քիչ կը լինի։

Տեղի հարցը միայն տեխնիքական և ֆինանսական պայմաններից կախումն ունի։

Ի՞նչ գործ ունի այդտեղ հայկական ագրեսսիվ քաղաքականութիւնը կամ հայրենասիրութիւնը. ինչո՞ւ էք խառնում հայ ժողովուրդը, որ ամենևինման չունի այս և այն հոսանքի կամ խմբակցութեան ձգտումների հետ։

Հայ ժողովրդի համար միևնոյն է՝ Նաւթլուղում լինի պոլիտեխնիկումը թէ Սաբուրթալո։ Հանդարտ թողէք հայութիւնը։

Վերջապէս, մի կողմ թողէք վէճերը, դժտութիւնները և միաբանեցէք իրագործելու ընդհանուր ոյժերով վեհ գործը մանաւանդ այժմ, երբ, ինչպէս իմանում ենք վերջին լրագրից, երկրի բարձր իշխանութիւնը, ի դէմս փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի, որոշել է իր բարձր հեղինակութեամբ, անշուշտ մանրաքննին և արդարադատ քննութիւնից յետոյ, որ պոլիտեխնիկումը լինի Նաւթլուղում։

Հարցը վճռված է. զուր տեղ գրգռել պէտք չէ ազգայնական շովինիստական ձգտումները։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
26 Նոյեմբերի

Լիվադիա.—Բարձրագոյն ներկայութեամբ Գէորգ Բազմայաղթի տօնի օրվայ առիթով տեղի ունեցաւ զօրահանդէս։ Յետոյ պալատում եղաւ նախաճաշ, որի ժամանակ Կայսրը բարեհաճեց խմել ս. Գէորգի անուան զօրամասերի կենացը։

—

Պարիզ.—Կաբինէտի վերջնական կազմը, մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր Դումէրգ, արդարադատութեան՝ Բիէնվենիւ-Մարտէն, ներքին գործերի մինիստր՝ Ռէնու, ֆինանսների՝ Կայո, զինուորական՝ Նուլյիս, ծովային՝ Մօնիս, լուսաւորութեան՝ Վիվիանի, առևտրի՝ Մալվի, հասարակական աշխատանքների՝ Ֆէրնանդ Դաւիդ, երկրագործութեան՝ Ռէնօ, գաղութների՝ Լէբրէն, աշխատանքի՝ Մեսսէն։ Մինիստրների օգնականները—ներքին գործերի՝ Գերէ, զինուորական՝ Մաժինօ, ծովային՝ Աժան, գեղարուեստի՝ Ժանիէ։ Ֆինանսների մինիստրի օգնականի պաշտօնը վերացված է։

Նոր կաբինէտի ծրագրում յայտնվելու է, որ կառավարութիւնը հետևելու է խաղաղասէր գործելակերպի, յենվելով պալատի ձախակողմեան տարրերի վրա. կաբինէտը կը ճշդէ աշխարհիկ դպրոցը պաշտպանելու մտադրութիւնը, աջակցելու է սենատին մշակելու ընտրողական բարենորոգումը երկու պալատներին հաշտեցնելու նպատակով, թէև գիտակցում է, որ նոր ընտրութիւնների համար քիչ ժամանակ է մնում. ֆինանսական գործերի նկատմամբ հարկաւոր չէ գտնում անմիջապէս փոխառութիւն կնքել, կամենում է փոխարինել այն զինուորական ծախքերը ծածկելու համար դրամագլուխների վրա հարկ դնելով։ Կառավարութիւնը պաշտպանելու է սենատում

պալատից ընդունված եկամտային հարկի օրինագիծը, պաշտպանելու է երեքամեայ զինուորական ծառայութեան ժամանակամիջոցը ի շահ պետական ինքնապաշտպանութեան։

Բացի մի քանի ծայրայեղ կուսակցական՝ արմատական և սոցիալիստական՝ օրգաններից, մամուլը շարունակում է բացառաբար վերաբերվել դէպի կաբինէտը։

—

Վաշինգտոն.—Պալատը ընդունեց մի բանաձև, որով լիազօրում է Միացեալ Պետութիւնների պրէզիդենտին՝ պաշտպանելով Պետութիւնների շահերը, աջակցել Զերչիլի առաջարկութեանը, որպէսզի մեծ պետութիւնները դադարեցնեն նաւատորմերի սպառազինումը։

—

Բէլգիաստ.—Բռնվեց 5 արկղ ռազմամթերք։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՆՑԼԷՐԻ ՃԱՌԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
26 Նոյեմբերի

Բերլին.—Ռէյխստագ։ Հերթին բիւջէի քննութիւնն է։ Վերնասրահները լի են։ Պետական կանցլերը ճառ է արտասանում, նուիրված բացառապէս արտաքին քաղաքականութեան։ Ճառը լսվում է մեծ ուշադրութեամբ և տեղ-տեղ ծածկվում է «բրաւօ» բացականչութեամբ, առանձն պէս երբ նա յիշատակեց աւստրօ-գերմական դաշնակցութեան կապերը, հաստատուն լինելու և անգլօ-գերմանական յարաբերութիւնները բարելաւվելու մասին։ Կանցլերը յիշեց նաև Սազոնովի և կօկովցեվի Բերլին այցելելը։

Ճառն աւարտվելուց յետոյ լսվեցին «բրաւօ»։ սոցիալիստների աթոռներում բացականչութիւններ. «Իսկ Ցաբէրնի դէպքերը»։

—

Բերլին.—Ռէյխստագ։ Կանցլերը մատնանշեց, որ քաղաքական անցքերը ներկայումս այլ ևս սուր կօնֆլիկտների կերպարանք չեն կրում։ Թէև պատմական յեղաշրջումների հետևանքների հնարաւորութիւնը դեռ ևս չէ կարող վերացած համարվել, այնու ամենայնիւ բալկանեան կրիզիսի բոլոր շրջաններում մեծ պետութիւնները, չը նայելով որ նրանց շահերը ոչ ամենտեղ հաւասար էին, գործում էին համերաշխ, որպէս զի վանդի չենթարկեն ամենքի համար ընդհանուր վախճանական նպատակը. ուստի նրանք կարող կը լինեն յաղթահարել դեռ ևս մնացած խոչընդոտները։ Այն գիտակցութիւնը, թէ մեծ պետութիւնների միջև եղած խաղաղ յարաբերութիւնները չը պէտք է խախտվեն իրերի նոր դրութեամբ Բալկաններում, ոչ միայն չէ նուազել, այլ և ուժեղացել է։ Գերմանիան առաջիկայում ևս մասնակցելու է մեծ պետութիւնների ընդհանուր աշխատանքներին նոյն ոգով, ինչպէս որ մինչև այժմ էր։ Սրա հետ միասին Գերմանիան պաշտպանելու է իր դաշնակիցների՝ Աւստրօ-Ունգարիայի ու Իտալիայի յատուկ շահերը, և միաժամանակ նպաստելու է պահպանելու եւրոպական մեծ պետութիւնների կօնցերտը շնորհիւ Անգլիայի հետ միասին փոխադարձ վստահութեամբ աշխատելու համոզմունքին, և շնորհիւ այն բանի, որ Գերմանիան յենվում էր դէպի Ռուսաստանն ունեցած իր բարեկամական յարաբերութիւնների վրա։

Խօսելով Բուխարեստի խաղաղութեան դաշնագիրը վերաքննելու հարցի մասին, կանցլերը նկատում է, որ Գերմանիան և Աւստրօ-Ունգարիայի դաշնակցական յարաբերութիւնները, որոնք հիմնված են երկու կայսրութիւնների խոշորագոյն կենսական շահերի վրա, չափազանց արդէն անխախտելի են. բալկանեան պրոբլէմի, որի մէջ Աւստրօ-Ունգարիան աւելի է շահագրգռված, քան Գերմանիան, մի որևէ պատահական կէտի առիթով ծագած մի քանի տարաձայնութիւնների պատճառով նրանց յարաբերութիւնները հաղիւ թէ կարող լինէին մառայվել (բացականչութիւններ՝ «Բրաւօ»)։ Եռապետական դաշնակցութեան պետութիւնների համերաշխութիւնը արդարացաւ բալկանեան կրիզիսի ամբողջ ժամանակը աւելի, քան որևէ ուրիշ ժամանակներ, այլ էլ առանց խախտելու մեծ պետութիւնների ընդհանուր աշխատանքը։ Եւրոպայի վերաբերմունքի առիթով դէպի Թիւրքիան ապագայում՝ կանցլերը կարծում է, որ նա իրաւունք ունի ընդգծել բոլոր մեծ պետութիւնների միաբերանական համերաշխութիւնը Թիւրքիայի յետագայ զարգացման վերաբերմամբ։

Գերմանիան համերաշխ է Անգլիայի ու երկու պետութիւնների դաշնակցութեան հետ։ «Մինիստր Սազոնովի և մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցեվի հետ ունեցած իմ խօսակցութիւններից նրանց ցանկալի այցելութիւնների միջոցին,—շարունակում է կանցլերը,—ես այն եզրակացութեան եկայ, որ Ռուսաստանը ժխտում է Փոքր-Ասիայում հողային տիրապետումներ անելու միտքը, որ Ռուսաստանի ձգտումները, որոնք լիապէս համապատասխանում են մերինին, ուղղված են Հայաստանի դրութիւնը բարելաւելուն, որ պահանջում են հինց Թիւրքիայի իրա շահերը, որը սկզբունքով ընդունել է այդ բարելաւումը անհրաժեշտ։ Ներկայումս ամենուրեք տիրող զսպված տրամադրութիւնը նկատի ունենալով՝ փոքր ի շատէ տևական ժամանակամիջոցում Թիւրքիայի ապագայի մասին քաղաքական վէճեր չեն նախատեսվում։ Մնում է, իսկապէս ասած, Փոքր-Ասիան որպէս ապարէզ տնտեսական աշխոյժ մրցութեան առանձին երկիրների միջև։ Ամբոխ տնտեսական շահերը, որ մենք ունենք այնտեղ, գլխաւորապէս Բաղդադեան երկաթուղու հետ կապված, պահանջում են մեր առանձին ուշադրութիւնը»։ Մանրամասնօրէն առաջ բերելով անգլօ-գերմանական յարաբերութիւնները, կանցլերը բաւականութեամբ յիշատակում է անկեղծօրէն վերջիններիս անընդհատ բարելաւվելը, որը և հնարաւոր դարձրեց դիմել կարծիքների անկեղծ փոխանակութեան։ Բաղդադեան պրոբլէմը լուծելու նպատակով Գերմանիան բանակցութիւններ սկսեց Անգլիայի հետ Աֆրիկական նահանգներում հաւանական տնտեսական հակազդեցութիւնները վերացնելու համար, առանց խախտելու երրորդ անձանց իրաւունքները։ Գերմանիայի կողմից միակողմանի զիջումներ անելու մասին այդ դէպքում խօսք լինել չէ կարող, ինչպէս և մամուլի կողմից հաղորդվող կոմպլէկտացիաների մասին, որոնք, իբր թէ, նկատի ունեն Ասիայի վերաբերմամբ՝ Կենտրօնական Աֆրիկայում ունեցած առաւելութիւնների փոխարէն կամ, ընդհակառակը, (ձայներ՝ «Բրաւօ»)։ Գերմանիայի դիրքը եւրոպական մայր ցամաքի իր կենտրօնում անդադար ցոյց կը տայ, որ անհրաժեշտ է լարել ժողովրդի ամբողջ ոյժը Գերմանիայի հզօրութիւնը՝ որպէս ցամաքային պետութեան՝ անխախտ պահպանելու համար (ձայներ՝ «Բրաւօ»)։ Դրա հետ միասին այդ ոյժերը հրամայողաբար պահանջում են անընդհատ զարգացումն համաշխարհային տնտեսական յարաբերութիւնների շրջանում։ Միայն ոչնչով չարդարացնող յոռետեսութիւնը կարող է ժխտել, որ Գերմանիան ամբողջութեամբը աշխատում է այդ մեծ նպատակին հասնելու վերջին տասնամեակների ընթացքում։ Այդ նպատակը մեծ է մեծ. նա յայտնագործում է իրանով մի որոշ հաստատուն նպատակ, թէև դրան կարելի է հասնել միայն յամառ կերպով ու համբերատար ձգտումներով։

Սոցիալ-դեմոկրատ Շեյդէմանը գրասնում է, որ կանցլերը ինքն ստեղծեց խաղոխեալ դրութիւն. անհրաժեշտ է գտնել Գերմանիայի արժանապատուութեանը համապատասխան ելք։ Շեյդէմանը հարցնում է, թէ գտնո՞ւմ է, արդեօք, կանցլերը, որ նա դեռ վայելում է հեղինակութիւն գերման ժողովրդի ներկայացուցիչը լինելու օտարերկրեայ պետութիւնների առաջ նրանից յետոյ, երբ ռէյխստագը իր կազմի 5/6 առաւելութեամբ նրան անվստահութիւն յայտնեց։ «Գործը,—ասում է Շեյդէմանը,—վերաբերում է ոչ թէ մինիստրներին տապալելուն, այլ աբսօլիւտ միապետական իշխանութիւնը սահմանափակելուն։ Կայսրը կարող է, ճիշդ է, նշանակել կանցլերին, սակայն չէ կարող ստիպել ռէյխստագին աշխատել կանցլերի հետ։ Սոցիալ-դեմոկրատները կառաջարկեն հանել բիւջէից կանցլերի և զինուորական մինիստրի ռոճիկները»։

Նորից հանդէս է գալիս կանցլերը, եռանդով բողոքելով Շեյդէմանի ասածների դէմ և առաջարկելով իրաւունք տալ իրան կանցլերին վճռել՝ թէ ինչպէս պէտք է պաշտպանել Գերմանիայի արտաքին քաղաքականութիւնը արտաքին աշխարհի առաջ։ Կանցլերը կարծում է, որ արտասահմանում այդ տեսակէտից այլ կերպ են մտածում, քան Շեյդէմանը (ծափեր աջից)։ Յետոյ կանցլերը քննում է անվստահութեան հարցը և մատնանշում է, որ, մի ու կէս տարի առաջ ընդունված վճռի համաձայն, կառավարութեանը անվստահութիւն յայտնելուց յետոյ ռէյխստագը մտադիր է միայն վկայել, որ կանցլերի աշխարհահայեացքները չեն համապատասխանում ռէյխստագի աշխարհահայեացքներին և ուրիշ ոչինչ. այժմ նոյն տեսակ քուէով յանկարծ կամենում են ճընշումն գործ դնել կայսրի և կանցլերի վճռի վրա, բայց դա խեղաթիւրել կը նշանակէ Գերմանիայի սահմանադրական-իրաւական դրութիւնը։ «Այդ—բացագանչում է կանցլերը,—պարլամենտի տիրապետութեան որոշ բարձրացումն է (շարժում ձախակողմեան ֆրակցիաներում, ձայներ աջից՝ «Բրաւօ»)։ Ես ամեն միջոցներով պէտք է կռուեմ մեր սահմանադրական-իրաւական դրութիւնը փոխելու դէմ։ Համաձայն պետական սահմանադրութեան, կայսրին է պատկանում կանցլերին նշանակելու և պաշտօնանկ անելու իրաւունքը, կայսրի վճիռը ազատ է (բացականչութիւններ սոց. դեմօկրատների կողմից՝ «դրժբաղդաբար»)։ Այստեղ աշխատում են, հակառակ սահմանադրութեան, ճնշումն գործադրել։ Անցեալ հինգշաբթի օրվայ որոշման պատճառով ես հրաժարական չը տուի, նրա պատճառով չեմ հրաժարվի (բուռն ծափահարութիւն աջից)։ Ես ոչ մի կերպ չեմ կամենում սահմանափակել անվստահութեան քուէի նշանակութիւնը, ես կամենում եմ սոսկ ընդգծել նրա իրական չափը. կարևոր օրինագծերի մերժման ժամանակ կառավարութեան և ռէյխստագի հակասութիւնները երևում են աւելի սուր կերպով, քան թէ անվստահութիւն յայտնելիս հարցապնդելուց յետոյ»։ Վերջում կանցլերը ձայնը բարձրացնելով ասում է. «Սահմանադրութեամբորոշված կայսերական իրաւունքները սահմանափակելու որևէ փորձին ես կը դիմադրեմ ամենավճռական ու ամենաանողոք կերպով։ Գերման ժողովուրդը չի կամենայ, որպէսզի կայսերական իշխանութիւնը հնազանդվի սոցիալ-դեմոկրատիայի ստիպողական ոյժին»։

Կանցլերի ճառը իր եռանդով ու մի քանի դարձուածքների խստութեամբ թողեց ուժեղ տպաւորութիւն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Հայկական խնդիր

Կ. Պոլիս, 15/28 Նոյեմբեր

Արտակարգ կերպով դարձեալ պրկուած է Թիւրքիոյ հայոց վիճակը։ Բոլոր երևոյթները դարձեալ ցոյց կուտան, թէ այս խեղճ ժողովուրդին գլուխէն դարձեալ պիտի անցնին նոր տագնապներ ու նոր փորձութիւններ։

Հիմա կացութիւնը քննելու ժամանակը չէ, սակայն երևոյթները մեծ նմանութիւն մը ունին 1896-ի մեծ ջարդերու նախօրեակի օրերուն, երբ դարձեալ կառավարութիւնը արտաքին ճնշման տակ՝ հայոց հետ իրաւախոնութիւններ փորձեց և երբ հայոց կողմէ ընդդիմութեան և մերժումի հանդիպեցաւ՝ իր բոլոր կատաղութիւնը ամբարեց ու յետոյ վրէժը լուծեց... երբ առիթը գըտաւ։

Բովանդակ թիւրք մամուլին մէջ ամեն օր կը գտնուին բազմաթիւ յօդուածներ, որոնք ցոյց կուտան թիւրքերու տրամադրութիւնը։ Սպառնական շունչով մը անոնք կուզեն հայերը հարկադրել իրենց հետ իրաւախոնվելու։

Կառավարութենէն ներշնչուած թերթեր գրած էին, թէ հայերը իրենք պէտք է ինքնաբերաբար յայտարարեն, թէ եւրոպական կօնտրոլ չեն ուզեր։ Ասիկա համիդական հին դրութիւն է, որ շատ անգամ փորձուեցաւ, մանաւանդ երբ կառավարութիւնը նեղ կը մնար, եւրոպական ճնշումի տակ։

Համիդ հայերէն կը պահանջէր յայտարարութիւն, թէ իրենք օսմ. կառավարութենէն ոևէ դժգոհութիւն չունին. հիմա ալ կը պահանջեն, որ ըսենք թէ կօնտրոլ չենք ուզեր։ Այս անգամ մամուլը կը կախէ բոժոժը, և իրեն կը յաջողէ պաշտօնապէս ալ դէպքերուն մէջ կարևոր դերք մը գրաւող մինիստրի մը անպաշտօն կերպով ներկայացուցած առաջարկը պարբերաբարձրանալու։ Սակայն տակաւին պաշտօնական ձեռնարկ չկայ, թէև կը սպասուի։

Թիւրք մամուլին մէջ՝ հայոց դէմ գրգռիչ հրատարակութիւնները կը շարունակուին ամեն օր և անոնց մէջ կը յայտնուի նենգամիտ մտադրութիւնը կառավարութեան։

Մէկ կողմէն ողբալու և շոյելու քաղաքականութիւնը, միւս կողմէն սպառնալու դրութիւնը իրար կը խաչաձևեն հոն՝ այդ յօդուածներուն մէջ։

Հայկական խնդիրը հիմա ամենէն կարևոր խնդիրը դարձած է օրուան և բոլոր թիւրք մամուլը անով կը զբաղի։

Կառավարութիւնը՝ նոյն իսկ կը դիմէ կեղծաւոր միջոցներու, և պատրիարքին՝ սուլթանին ներկայանալու առթիւ, ինչպէս նաև Բ. Դուռ առաջին այցելութեան օրը, արտակարգ պատիւներ ընծայից անոր, ասով թերևս շահելու համար զայն։

Թիւրքերը կանցնեն հիմա տագնապալի շրջան մը։ Եդիրնէի դրաւումէն յետոյ՝ հիմա կուզեն դիմադրել նաև Հայաստանի բարենորոգման խնդրոյն մէջ ալ Եւրոպայի, որուն անդօրութեան համոզուեցան։

Զիրենք յուսախաբ ընող բանը եղաւ միայն այս խնդրոյն մէջ Գերմանիոյ համաձայնութիւնը Ռուսիոյ հետ, որուն հաւատալ իսկ չեն ուզեր և կատաղօրէն կը յարձակին անոր վրայ, ըսելով թէ «անոր ի՞նչ եղաւ, որ այսպէս կը համաձայնի Ռուսիոյ»։

Դարձեալ հայերու ուշադրութիւնը Ռուսիայէն վրիպեցնելու համար, մի քանի օրէ ի վեր թիւրք թերթերը «ի դէպս և յանդէպս» բերնի ծամոց ըած են սա խօսքերը, թէ Համիդ հայերը ջարդեց մեծ պետութեան մը թելադրութեամբ։ Ասով կուզեն ակնարկել Ռուսիան և, զայն ալ ջարդարար հռչակելով, մեզի թշնամացնել Ռուսիոյ հետ։

Սակայն այս խօսքերու արժէքը արդէն չափուած է, և հայերը գիտեն զանազանել այլ ևս իրենց բարեկամը և թշնամին։

Այս հինգերեայ ձեռերու դիմելով՝ թիւրքերը կը կարծեն հայերը ահարեկել և իրաւախոնութեան բերել, միւս կողմէն կը փորձեն խաբել Եւրոպան, որ հայկական խնդրոյն համար իսկական պահանջատէրն է։

Թիւրքերը կուզեն խոստումներով անցնել սպառնացող վտանգը և կօնտրոլին դէմ պայքարելու համար շատ հնարիմաց միջոց մը գտած ըլլալ կը կարծեն խուժանը գրգռելով, թէ հայոց համար պետութեան անկախութիւնն է, որ կը կորսուի։

Հիմա դիւրին է ըմբռնել, թէ ինչ մեծ ջանքեր կընէ Բ. Դուռը՝ համոզելու համար Եւրոպան, որ չեմ գիտեր քանի՛երորդ անգամ ըլլալով անգամ մըն ալ հաւատայ իրեն, թէ բարենորոգումները պիտի գործադրէ։

Իսկ բարենորոգմանց մինչև հիմա յապաղելուն համար այժմ գեղեցիկ պատճառաբանութիւն մը գտած են։

Կը յայտարարեն, թէ անոնք շատոնց գործադրած և թերևս աւարտած ալ պիտի ըլլային, եթէ Անգլիա տուած ըլլար պահանջած պաշտօնատարները։ Անգլիոյ այս մերժումը է (շարժում ձախակողմեան ֆրակցիաներում, ձայներ աջից՝ «Բրաւօ»)։ Ես ամեն միջոցներով պէտք է կռուեմ մեր սահմանադրական-իրաւական դրութիւնը փոխելու դէմ։ Համաձայն պետական սահմանադրութեան, կայսրին է պատկանում կանցլերին նշանակելու և պաշտօնանկ անելու իրաւունքը, կայսրի վճիռը ազատ է (բացականչութիւններ սոց. դեմօկրատների կողմից՝ «դրժբաղդաբար»)։ Այստեղ աշխատում են, հակառակ սահմանադրութեան, ճնշումն գործադրել։ Անցեալ հինգշաբթի օրվայ որոշման պատճառով ես հրաժարական չը տուի, նրա պատճառով չեմ հրաժարվի (բուռն ծափահարութիւն աջից)։ Ես ոչ մի կերպ չեմ կամենում սահմանափակել անվստահութեան քուէի նշանակութիւնը, ես կամենում եմ սոսկ ընդգծել նրա իրական չափը. կարևոր օրինագծերի մերժման ժամանակ կառավարութեան և ռէյխստագի հակասութիւնները երևում են աւելի սուր կերպով, քան թէ անվստահութիւն յայտնելիս հարցապնդելուց յետոյ»։ Վերջում կանցլերը ձայնը բարձրացնելով ասում է. «Սահմանադրութեամբորոշված կայսերական իրաւունքները սահմանափակելու որևէ փորձին ես կը դիմադրեմ ամենավճռական ու ամենաանողոք կերպով։ Գերման ժողովուրդը չի կամենայ, որպէսզի կայսերական իշխանութիւնը հնազանդվի սոցիալ-դեմօկրատիայի ստիպողական ոյժին»։

Կանցլերի ճառը իր եռանդով ու մի քանի դարձուածքների խստութեամբ թողեց ուժեղ տպաւորութիւն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԶՆԶՎԱԾ

(Գասելի Նէմիրօվիչ-Դանչենկոյի)

I

Ոչ յաճախ, բայց անցեալի լիկվիդացիան ստիպում է մեր բարձր շրջանները ևս խոստովանել իրանց գործած սխալները։ Ճահճային պղպջակների նման տարածվում են զրպարտութիւնը և սուտը։ Խեղդուկ է դարձել շրջապատը, մթագնելով մարդու գիտակցութիւնը և բթացնելով մարդու խղճմտանքը։ Մերկ իրականութիւնը տեղի է տալիս մղձաւանջներին։ Այդպէս անցնում են տարիներ, տասնեակ տարիներ։ Ասես, ինչ-որ հիւանդ հիպնոսի մէջ ստեղծում են ահարկու դէպքեր, թափվում է արիւն, սերմանվում է թշնամութիւն, հնչվում է վիշտ։ Պատահմամբ մօտենում են ուրիշները, դեռ չը շնչած թունաւոր օդը։ Նրանք կուրօրէն հաւատ չեն ընծայում պատրաստ դրութեան և զումարներին, այլ ստուգում են զումարելիները և յանկարծ պարզվում է, որ մինչև օրս բացէ ի բաց տիրում էին ծանր երազներ... Մոայլ պատրանքները չքանում են, և—լաւ է ուշ, քան երբէք—կենդանի աշխատանքը փոխարինում է նախկին թմրութեան։

Միևնոյնը ներկայումս մենք նկատում ենք Կովկասում։

Զինապատ գազաթների ու հէքիաթային հովիտների, ինքնատիպ գեղանի ցեղերի հոյակապ երկիրը ներկայանում էր մեզ վարչական կախարդական լապտերի մէջ, գունաւորված ամենամռայլ գոյներով։ Այնտեղ թագաւորում էր ինչ-որ բաօս և կարծես, նրա արքայական լեռների անդուսպ մրրիկները չէին բարձրացնում այն սպիտակ ուրուականները, որոնցով այնտեղից սպառնում էին մեզ սուտ մարգարէները։ Ա՛յ թէ ինչ լաւ թեմա էր հայրենիքը փրկողների համար։

Այդ թեմայով ձեռք էին բերվում բարձր պաշտօներ, անհատները ստեղծում էին իրանց բարեկեցիկ վիճակ ի վնաս հազարաւոր իրաւազուրկների... Եւ ճիշդը պէտք է խոստովանել. Արևելքի պօէզիայի այդ առասպելները երկրում կեանքը և ձանձրալի էր, և տխուր... Հերոսական առասպելների ոգուն, ս Ալժիրը դարձել էր անասուններ քերթելու վայր... Ասպետներն այդտեղից հեռացել էին և նրանց տեղերը բռնել էին խելառ կամակորները...

Փառք Ալլահին, վերջերս կենսաբար քամիները փչել-վանել են այդպիսիներին և այդտեղ կամաց-կամաց զարթնում է իրական կեանքը։ Ճիշդ է, տակաւին երկար ժամանակ զգաստ իրականութիւնը պայքարելու է աւազակային դարագլխի դէմ։ Մենք երկիրը ընդունեցինք ֆէօդալիզմի ժամանակ, և այնտեղ դեռ նոր էր սկսվում նոր պատմութիւնը, իսկ նորագոյնը պէտք է դեռ սպասել...։

II

Այդ ժամանակամիջոցում ամենազբաղված ժողովուրդը հայերն էին։

Դեռ առաջ նրանց և թուրքերի միջև սերմանում էին ցեղական թշնամութիւն ու առելութիւն։ Նրանց կուռեցնում էին և հացնում իրար դէմ դանակազործութեան։ «Գնուիր և կառավարիր»։ Կարծես թէ այդ երկու խաղաղ ցեղերը չէին կարող հաշտ ապրել ու աշխատել միասին։ Ապագայ անհայտ պատմաբանը երևան կը հանէ անշուշտ այդ փոխադարձ ջարդերի զսպանակները, այն բանալին, որ լարեց այդ բովանդակ արիւնահեղ շփոթը, որից, սակայն, օգտվեցին երկուսակ խելօք մարդիկ՝ միանալու և պայմանաւորվելու, որից յետոյ այդ շփոթը հանդարտվեց, ճիշդ այնպէս՝ ինչպէս մոլեգին լեռը առաջին իսկ դաղարին։ Երևացին ազատ ակնարկներ հայկական սեպարատիզմի մասին։ Տեղական մարդատեացների գրչով այդ ակնարկները աճեցին, ինչպէս որդը աղբակոյտի մէջ, և շուտով այն ժամանակվայ Պետերբուրգի բարեհաճ աջակցութեամբ հայկական թագաւորութեան առասպելը զբօսնելու գնաց Ռուսաստան աշխարհը... Մոռացան այն, որ հայերը ոչ մի տեղ համախմբված չեն ապրում։ Նրանք ամբողջ Կովկասում խառն են վրացիների, թուրքերի և ռուսների հետ,—էլ ո՞րտեղից կարող է լինել նրանց համար առանձին գոյութիւն։ Խաղաղ հողագործներ, այգեպաններ, զինագործներ, առևտրականներ, բժիշկներ, ինժեներներ, նաւթարդիւնաբերողներ,—մտածում ես,—սրա՞նք են կազմում յեղափոխական տարը... Դեռ վերջերս էր, հայերը ասես մոռանում էին իրանց մայրենի լեզուն, գրելով ազգանունների վերջին տառերը «օվ»-ով փոխանակ «եան»-ի. և եթէ նրանց մէջ բռնվեց ազգայնին, այլ և ոչ բնաւ անջատողական շարժում, այդ եղաւ սոսկ այն պատճառով, որ մենք ինքներս յիշեցրինք նրանց, թէ նրանք ռուսներ չեն։ Սկսեցինք փակել նրանց դըպրոցները, արգելել գրականութիւնը իրանց գրաբար լեզուով, գրաւեցինք նրանց եկեղեցական կալուածքները։ Նրանց դէմ մենք հանեցինք թաթարներին, իսկ սրանց դէմ՝ հայերին։ Ես յիշում եմ այն ժամանակվայ մի պետերբուրգցու ցինիկ դարձուածքը. «Այդ կերակուրը պէտք է մատուցանել կարմիր սոուսով»։ Մի ուրիշը աւելի պարզ էր արտայայտվում։ Խօսելով հայ ժողովրդին զրպարտելու մասին, նա եղրափակում էր. «Ինձ համար կարևոր չէ՝ ճշմարտութիւն է այդ թէ ոչ. ներկայումս այդ շահաւէտ է մեզ...»։ Դժբաղդաբար բարձր պաշտօնական վիճակի հասած հայերը արիութիւն չունեցան բացարձակօրէն հանդէս գալ Պետերբուրգի դիւանագիտների այդօրինակ Մեֆիստոֆելների դէմ։ Եւ Դեղեանօվներն ու ուրիշները կամ լուռ էին կամ թէ փոքրոգութեամբ ձեռքերը թափ տալիս—ոչինչ չես կարող անել... Համբերիր, Պօբեդոնոսցև կը դառնաս։

III

Կովկասի այժմեան փոխարքան մեծ արժանիք ունի։ Նա եկաւ իբրև չեղոք անձն, առանց կանխակալ համակրանքի ու հակակրանքի։ Տեղում նրան աջողվեց շրջապատել իրան ոչ-սև ակնոցաւոր մարդկանցով, որոնք և կարող եղան շուտով ծանօթանալ այդ բոլոր խառնաշփոթի հետ։ Կարգամիտները, ի հարկէ, շատ դժգոհ էին։ Բաս ի՞նչ, բռունցքները քոր են գալիս. սակայն արգելող կայ, զսպող կայ՝ չը համարձակվիս...։ Շողոքորթել չի կարելի, տել չարժէ, դրան վերևից չեն հաւատում։ Ուզեցին հաջող բարձրացնել, բայց դարձեալ անպաղող։ Վօրոնցով-Դաշկովի պաշտօնական զեկուցագրերից։ Լրագիրներում արդէն բերվեցին զանազան ժամանակ և զանազան հարցերի նկատմամբ քաղուածքներ յիշեալ զեկուցագրից, բայց համարեա ոչ ոք չը շօշափեց այն, թէ ինչպիսի դրութեան մէջ է գտնվում ներկայումս հայկական հարցը։ Փոխարքան նրա բացատրութեան անցնելուց առաջ մի նշանաւոր խօսք է ասում։ Ով գիտէ, թէ այդպիսի զեկումենտները որքան զսպված են գրվում, նա կըմբռնէ, թէ այդ խօսքը որքան կարևի է ընդարձակել և լայնութեան, և խորութեան կողմից. «Դեռ 6 տարի առաջ ես զեկուցեցի լիակատար անկեղծությամբ, որ մենք սերվել ենք ոչ թէ մեր ծնողներից, այլ դուրս ենք եկել դաստիարակչական ապատարանից։

IV

Այս օրերս ես եղայ խաղաղութեան ընկերութեան նիստում։

Խօսում էին այն մասին, որ հորիզոնի վրա կրկին երևում են ահարկու ամպեր։ Բերլինի դաշնադրութեան որոշումները, չը նայած որ անցել է արդէն ամբողջ 35 տարի, չեն գործադրված Թիւրքիայի վերաբերութեամբ ոչ ընդհանուր առմամբ, ոչ էլ մասնրամասնութեամբ։ Ընդհակառակը, եւրոպական համերգի այդ օրօրոցի երգից յետոյ Թիւրքերը սրի են քաշել մի քանի հարիւր հազար հայ, և այդ դժբաղդ երկրի հարցը ինչպէս այն ժամանակ, այնպէս և այժմ կանգնած է մեր առաջ իր ամբողջ սարսափով։ Հաւազայի վեհաժողովի մասին բարձր Կօրֆի զեկուցումից առաջ բաւական ժամանակ կար և Մ. Կովալեվսկին մի տեսութիւն արեց, որի համար նա նիւթ էր քաղել Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովի պաշտօնական զեկուցագրերից։ Լրագիրներում արդէն բերվեցին զանազան ժամանակ և զանազան հարցերի նկատմամբ քաղուածքներ յիշեալ զեկուցագրից, բայց համարեա ոչ ոք չը շօշափեց այն, թէ ինչպիսի դրութեան մէջ է գտնվում ներկայումս հայկական հարցը։ Փոխարքան նրա բացատրութեան անցնելուց առաջ մի նշանաւոր խօսք է ասում։ Ով գիտէ, թէ այդպիսի զեկումենտները որքան զսպված են գրվում, նա կըմբռնէ, թէ այդ խօսքը որքան կարևի է ընդարձակել և լայնութեան, և խորութեան կողմից. «Դեռ 6 տարի առաջ ես զեկուցեցի լիակատար անկեղծու-

ժումը նոյն իսկ թշնամութիւն մեկնող թերթեր չպակսեցան։

Բոլոր ասոնք ցոյց կուտան, թէ նորէն հայոց համար յղի օրերու մէջ կայանք, և կրնայ ըլլալ, որ թիւրքերը դարձեալ փորձուին հայերը ջարդելով պատժելու իրենց սիրական միջոցին դիմելու։

Այս կացութեան մէջ մեր տարուբերուած օրերուն լուր ելաւ, թէ Պողոս փաշա Նուպար ալ Եգիպտոս կը դառնայ։ Ասիկա յուսահատութիւն պատճառող բնոյթ ունեցող լուր մըն էր, վասն զի կը նշանակէր, թէ այլ ևս ընելիք բան մնացած չէ, մինչ, որքան կը տեսնուի, գործելու ժամը դեռ նոր հասած է, և Պողոս-փաշա գործը լքանելու զօրաւոր պատճառ մը պէտք էր ունեցած ըլլար։ Բարեբաղդաբար այս լուրը հերքուեցաւ, թէև չենք գիտեր թէ ո՞րքան ստոյգ աղբիւրէ։

Հայկական խնդրոյն լծակը Եւրոպայի մէջ է, և ռուսական պետական մարդոց—մասնաւորապէս Սազոնովի և Կոկովցեվի—յայտարարութիւնները հայոց համար յուսադրիչ էին։

Հայերու մէջ ուժ կասկած կամ տարակոյս չկայ ռուսական, անգլիական և ֆրանսական պետութեանց վարիչներու բարեացակամութեան վրայ, սակայն միշտ տարակոյսով կը դիտուի Գերմանիոյ և իր զինակիցներուն շահագրգռութիւնը Հայաստանի

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՅԱՒԱԿՑԱԿՆ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Հետագրով)

Սինդափուր, 6 դեկտ. (Ն. տ.)

Ողբում ենք Ալէքսանդր Քալանթարի մահը։

Հայկական Հայրենասիրական Ակումբ

Զաղվին (Պարսկ.), 1 Նոյեմբ.

Մի անսպասելի, անհաւատալի լուր հաղորդեցին մեզ Բաշտից... Հաւատա՞լ արդեօք... Բայց չէ՞ որ «բարի լուրն է դժուարութեամբ տարածվում, չար լուրը ծիծեռնակի թեւով թռչում»—ասում է հայ ժողովուրդը։ Դժուարանում ենք կրկնել։ այլ ևս չը կայ Ալ. Քալանթարը, «Մշակի» արժանաւոր խմբագիրը, Գրիգոր Արծրունու համանման յաջորդը, գրական անդաստանի համեստ մշակը, թշուառ գեղջուկի կրթիչն ու խրատատուն, այլ ևս չը կայ։ Չը կայ այլևս՝ գաղտիարի անվեհեր վիպասանը, սկզբունքի ամենաջերմ պաշտպանը։ Չը կայ այլևս խաղաղութեան հրեշտակը, գաղափարական պայքարի ճշմարիտ դատախազը, չափաւորութեան, կօրրեկտութեան օրինակելի գէմքը, չը կայ այլ ևս մեր ժողովրդի «սուսիկ-փուսիկ» առանց աղմուկի, առանց թմբկահարութեան տակուն գործիչը... Ո՞ւմ խորհրդին դիմեն այսուհետև՝ հայ գեղջուկն ու գեղջկուհին իրանց չարքաշ կեանքի ու բազմատեսակ կարիքների համար, բանտորն ու աշխատաւորն՝ իրանց վիճակը թեթևացնելու, ուսուցիչն ու գրականագէտն իրանց դրութիւնը բարելաւելու, վաճառականն ու արհեստաւորն իրանց դասակարգային շահերը գիտակցելու, թիւրքահայ, պարսկահայ ժողովուրդը՝ բարի խորհուրդներ հայցելու։ Չը կայ... դնայ... Լացն ու արտասուքը, ողբն ու կականը բաւական չէ, կորուստը, անմահ կորուստը չի փոխարինվի։ Խօսք չենք գտնում սփոփելու՝ ոչ «Մշակին», ոչ էլ հայ ժողովրդին։ մենք էլ խառնում ենք մեր արտասուքը բոլորի հետ և ողբում անփոխարինելի կորուստը... Թող թեամբ, որ հայկական հարցը Ռուսաստանի սահմաններում մենք ինքներս ստեղծեցինք հայերի կրօնական ու ազգային զգացմունքների հետ անզգոյշ վերաբերմունքով։ Այդ ժողովրդի $^4/_5$ մասը բնակվում է իր ընիկ երկրում, մասամբ մեզ մօտ Արարատի շուրջը, մասամբ Թիւրքիայում։ Դրանք ջանասէր հողագործ շինականներ են։ Այդ աշխատանքը այնքան մօտ է ժողովրդի սրտին, որ անգամ հայ-քաղաքացիները ամենից առաջ՝ հողագործներ են։ Միայն նրանց $^1/_5$ մասը ապրում է հայրենիքից դուրս։ Այսօրինակ պայմաններում չէ կարելի խօսել մի կողմից այդ ցեղի մակաբուծութեան մասին և միւս կողմից վերագրել նրան Բօստոլից Վօրոնէժ հայկական թագաւորութեան առասպելը»։

V

Ճիշդ է ասած՝ «քոր եկաւ ձեռքը, տուր մէջքին»։ Բայց հէնց այդ տեսակ մեղադրանքներ—Հայաստան՝ Վօրոնէժից սկսած—լսվում էին դեռ նորերս, և Պետերբուրգի դիւանատների խորամիտ մեծաւորները յօժարութեամբ հաւատում էին այդպիսի աշխարհագրութեան։ Հանա՞ք բան է, երբ Թիֆլիսի պանդոկների այցելուներ Կոպէյկին կապիտանները՝ վիրաւորված ու բարձի թողի արված՝ (արիւն ենք թափել) ուղարկում էին իրանց հայրենասիրական սուգ ու շիւանը։ Այժմ այդ ծիծաղելի է. բայց այն ժամանակ, շնորհիւ այդ տեսակ լաց ու կոծողների, հայկական հարցը իսկապէս մատուցվում էր «կարմիր սօսուով»։

Ապա փոխարքան շարունակում է.

«Ոչ մի սեպարատիզմ կովկասահայերի մէջ չը կայ։ Չը կար նոյնպէս 1907 թ.ին, երբ խռովութիւնները մեղմացան։ Անցած տարիները ապացուցեցին այդ վկայութեան ճիշդ լինելը։ Ազգայնական շարժման բռնութ

ուստի բացման հանդէսը յետաձգվում է դեկտեմբերի կէսերին։

◆ Դեկտեմբերի 2-ին, երկուշաբթի օր, Արտիստական թատրոնի բեմի վրա առաջին անգամ կը ներկայացվի Մոլիէրի «Դոն-Ժուան» յայտնի պիէսը, որի գլխաւոր դերը՝ Դոն-Ժուան հերոսինը՝ կը կատարէ դերասան Վահրամ Փափազեանը։

◆ Քաղաքային դուման յանձնարարել է քաղաքային տեխնիկ Օհանջանեանին նախագիծ մշակել նորակառոյց սպանդանոցին կից թռչունների մորթելու բաժանմունք հաստատելու մասին։

◆ Թիֆլիսում քութէշ և տիֆ հիւանդութիւնները վերջին ժամանակ բաւական պակասել են։

◆ Շուլաւէր մեկնեց Թիֆլիսի նահանգական դատարանի նստաշրջանը։

◆ Նոյեմբ. 30-ին նշանակված է Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան հրապարակային նիստը մի քանի զեկուցումներ լսելու համար։

◆ Զուբալովի անուան երեխաների նոր հիւանդանոցում արդէն ընդունվել են 25 երեխայ։

◆ Երկրագործութեան դեպարտամենտը 500 ռուբլի է յատկացրել Կովկասեան Մեղուաբոյծների Ընկերութեանը մեղուաբուծական թանգարան հաստատելու։

◆ Դեկտեմբերի 8-ին Զուբալովի ժողովրդական Տանը կը լինի հանդիսաւոր ցեղակոյթ Վ. Կօրոլենկոյի պատուին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ ինքն շնորհակալութեամբ ստացել է Արշակ Ատոմհանից հանգուցեալ Բագրատ Շախեանցի դագաղի վրա պակ դնելու փոխարէն յօգուտ ընկ. ձրի և էժանագին աշակերտական ճաշարանի 15 ռուբլի։

◆ Սուրբ-Մինասի դպ. հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպել, որ ինքն շնորհակալութեամբ ստացել է Նիկ. Շախեանից ի յիշատակ իր նորոգ հանգուցեալ հօր՝ Բագրատ Շախեանցի՝ յիսուն ռուբլի յօգուտ դպրոցի։ Նոյն պարոնը խոստացել է դպրոցի գաթում ջուր բերելու ծախքն ևս յանձն առնել։

◆ Որոշված է Կովկասեան քաղաքների ներկայացուցիչների 3-րդ համագումարը կայացնել Բագում, 1915 թ.-ին։

◆ Քաղաքային առաջին ապաստարանում անցեալ հոկտեմբեր ամսում գիշերել են 206 տղամարդ և 4 կին։ Նրանք ըստ ազգութեան բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 92 տղ., հայեր՝ 76 տղ. և 4 կին, վրացիներ՝ 27 տղ., լեհեր՝ 2 տղ., գերմանացիներ՝ 4 տղ., յոյներ՝ 2 տղ. և զանազան ազգութիւններից՝ 3 տղ.։

◆ Մոսկվայից բժիշկ Սիմէոն Շահ-Նազարեան հեռագրում է մեզ, որ քահանայական վէճը վախճան ստացաւ նրանով, որ իշխան Աբամելիք-Լազարեանը հաճայնեց Արսէն սարկաւագ Սիմէոնեանի ձեռնադրութեան և միջնորդեց այդ մասին թեմական առաջնորդի մօտ։

ՄԱՄՈՒԼ

Կովկասեան քաղաքների ներկայացուցիչների երկրորդ համագումարը, որ կայացաւ Թիֆլիսում վերջերս, առիթ է տուել «Рус. Вѣд.» լրագրին մի առաջնորդող յօդուածով խօսել այն կարիքների մասին, որ ունի Կովկասի քաղաքային ինքնավարութիւնը։

Առաջ ենք բերում մի քանի կտորներ այդ յօդուածից.

Կովկասը Ռուսաստանի մի ինքնակերպ անկիւնն է։ Այլ ժողովուրդ, հասարակական կեանքի այլ դասաւորութիւն։ Եւ կովկասեան քաղաքների ընութիւնն ևս այն չէ, ինչպէս ներքին Ռուսաստանում։ Բայց նրանց մէջ գործում է ընդհանուր պետական քաղաքային կանոնադրութիւնը, ուստի և կովկասեան քաղաքային գործիչների համագումարի մէջ լսվում էին նոյն համապատասխան տրտունջները։ Նրանց վառ արտայայտութիւնը հանդիսացաւ աղմկալից աջողութիւն ունեցող այն ճառը, որ արտասանեց համագումարի բացման օրը իշխան Ա. Աբամելիքը։

Տուէք քաղաքներին տնտեսական ինքնավարութեան իրաւունքներ, ազատեցէք նրանց վարչական իշխանութիւնների ձանձրացուցիչ խնամակալութեան խանձարուրներից—ահա իղձերից ամենառաջինը, որ արտայայտվեց համագումարում։ Այդ իղձին յօժարութեամբ կը միանան Ռուսաստանի բոլոր քաղաքները՝ Արխանգելսկից սկսած մինչև Երևան, Բիգայից մինչև Վլադիվոստոկ։

Տուէք քաղաքներին արժանաւոր գոյութեան հնարաւորութիւն, բացէք նրանց համար եկամուտների նոր աղբիւրներ, ազատեցէք նրանց ընդհանուր պետական հարկերի անարդար ծանրութիւնից, զիջեցէք նրանց քաղաքային անշարժ կալուածների վրա դրված պետական տուրքերը—ահա երկրորդ իղձը, որ արտայայտվեց կովկասեան համագումարի մէջ նոյն այժով, որով հնչվեց նա Կիէվում կայացած քաղաքային գործիչների համագումարի մէջ։

Վերջապէս տուէք քաղաքներին արդարացի ընտրողական օրէնք, լայնացրէք քաղաքային ընտրողների շրջանակը, ժատչելի դարձրէք քաղաքային ընտրողական սափորները քաղաքային ազգաբնակութեան բազմազան խաւերի համար—ահա երրորդ մտավը, որ թնդաց կովկասեան համագումարի բացման օրը և որի հետ լիակատար համերաշխ են և ներդաշնակ ռուսական քաղաքների լաւագոյն գործիչները, անկախ նրանց աշխարհագրական դրութիւնից։

Ապա թերթը մատնացոյց է լինում և այն հանգամանքի վրա, որ շեշտված է իշխան Արղութեանի ճառի մէջ. այդ այն է, որ կովկասեան քաղաքային վարչութիւնները մի առանձնայատկութիւն ունեն։ Նրանք գտնվում են մի երկրում, որ զուրկ է զեմստվոյից։ Նրանք՝ ինքնավարութեան քաղաքակրթական գործունէութեան օազիսներ են, որոնք գտնվում են անապատում։ Դրա համար դէպի նրանց են դիմում հիւանդները գաւառներից, ուր նրանք չեն գտնում բժշկական օգնութիւն. երեխաները, որոնք տեղ չեն գտնում գաւառի գպրոցներում։ Այդ ամենը աւելի մեծացնում է կովկասեան քաղաքների առանց այն էլ ծանր ֆինանսական դրութիւնը, միևնոյն ժամանակ շարունակ յիշեցնում է զեմստվային հաստատութիւններ մտցնելու անհրաժեշտութեան մասին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳՈՆԷ ՄԻ ՔԻՉ ԱՄՕԹ

Թիֆլիս, 27 նոյեմբ.

Այն օրից, որ ես դադարել եմ գրել «Հորիզոն» լրագրում, մանաւանդ այն օրից, երբ այդ լրագիրը յետ եմ դարձրել խմբագրութեանը, չը կամենալով կորցնել ժամանակս նրա խորը փիլիսոփական շարադրութիւնները կարդալով, սկսվել է իմ դէմ մի անօրինակ արշաւանք։ Մի արշաւանք, որ «Հորիզոնի» խմբագրութիւնից տարածվել է փողոցները, և ես քայլ անգամ չեմ կարողանում անել առանց վիրաւորական խօսքեր լսելու զանազան թերուս համակիներից։

Արշաւանքն աւելի սաստկացել է այժմ, երբ ես սկսել եմ աշխատակցել «Մշակում», և, անկասկած, նա քանի գնայ՝ այնքան աւելի պիտի կատաղի։

Հայ գրողի տխուր ճակատագիրն է միշտ հալածվելը։ Այսպէս են եղել իմ նախորդները, այսպէս են ներկաները, այսպէս էլ պիտի լինեն մեր յաջորդները։ Դա մի ախտ է հայ մամուլի մէջ, որ, երևի, երբէք չը պիտի արմատախիլ լինի։

Ես ոչ ժամանակ ունեմ և ոչ ցանկութիւն այդ ախտի դէմ կռուելու, համարելով ամեն մի կռիւ ապարդիւն։ Ահա ինչու ես վճռել եմ արհամարհանքի դատապարտել իմ դէմ եղող բոլոր լրագրական և փողոցային յարձակումները։ Թող «Հորիզոնը» և նրա փոքրաւոր «Կովկասի Լաբերը» որքան կամենում են քարկոծեն իմ «Զար ոգին» էլ, իմ «Նամուսն» էլ և իմ «Կործանվածն» էլ, իմ բոլոր երկերն էլ. այդ ինձ մաղաչափ վշացնել չէ կարող, որովհետև վշանալ կարելի է միայն այն ժամանակ, երբ վշացնողի կարծիքին չափ, նշանակութիւն ես տալիս։

Բայց կայ մի բան, որ պէտք է գարշելի լինի ամենքի համար, թէկուզ «Հորիզոնի» էջերում։ Դա բացարձակ ստախօսութիւնն է։

Ոմն Ֆակիր այդ լրագրի երէկվայ համարում տպել է մի ֆէլիէտոն, ուրնայ ստախօսութիւններ անելով, ասում է, թէ ես Պարիզից «Գործ» լրագրում գրել եմ մի շարք յօդուածներ թատրոնի մասին. այդ ճիշդ է. բայց ես երբէք չեմ գործածել այն բառերը, որ ինձ է վերագրում պ. Ֆակիրը, այն էլ չակերտների մէջ։

Փասը հետևեալն է։ Այն ժամանակ, երբ ես Պարիզ էի, Թիֆլիսի լրագիրներում կարդացի, որ մի խումբ՝ թատրոնին անձնուէր անձինք աշխատում են սեփական թատրոն շինել։ Ցիշված էր մի հոմեմատաբար համեստ գումար, եթէ չեմ սխալվում՝ 150,000 ռ., և մարդիկ յոյս ունէին այդ գումարով թատրոն կառուցանել։ Դրա դէմ էր, որ ես գրեցի։ Ես գրեցի, թէ, եթէ արդէն միաք կայ թատրոն շինելու՝ պէտք է շինել օրինաւոր թատրոն, որ կարողանայ մրցել Արքունական և Արտիստական թատրոնների հետ, որ 150,000 ռուբլով ոչ թատրոն, այլ բաղանի միայն կարելի է շինել։

Նոյն կարծիքի եմ և այժմ, նոյն կարծիքն եմ յայտնել և իմ, «Մշակում» տպված յօդուածում և նոյն կարծիքի պէտք է մնամ միշտ։

Որ ես «խայտառակութիւն և սրիկայութիւն» համարեմ հայ ազգի սեփական թատրոն ունենալը՝ այդ արդէն աւելի քան ծիծաղելի է ոչ միայն ինձ ճանաչողների, այլ և չը ճանաչողների համար։

Գոնէ մի քիչ ամօթ ունեցէք, երբ ստում էք և զրպարտում։ Շերվանզադէ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Վանի վիլայէթում հաստատվել է մի մանուածողով Բ. Դրան կողմից, բաղկացած մի յոյնից, մի թիւրքից և մի հայից։ Մանուածողովը պաշտօն ունի լուծել հայերի և քիւրդերի հողային վէճերը։ Եթէ խաղաղ միջոցները չօգնեն, մանուածողովը լիազօրութիւն ունի վարձատրել հայերին քիւրդերի ձեռքով խլված նրանց հողերի փոխարէն։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրքաց պարլամենտում հայերը պահանջում են 22 տեղ, մինչդեռ Բ. Դուռը համաձայն է տալու 18 (ոչ թէ ըստ Հ. Գ. 27 տեղ)։ Մինիստրների խորհուրդը իրազեկ է եղել, որ ազգային քաղաքականութեան հարցերում բոլոր հայկական կուսակցութիւնները վճռել են գործել համերաշխ։

◆ Կ. Պոլսից հաղորդում են, որ հայոց նորընտիր պատրիարք Զաւէն արքեպ. տեսակցեց ռուսաց դեսպան Գիրսի հետ։ Նորընտիր պատրիարքը բանակցում է թիւրքաց ներքին գործերի մինիստրի հետ՝ հայերին քաղաքական զիջումներ անելու մասին։

◆ Վիէննայից հեռագրում են, որ թիւրքիան իբրև զիջում Ռուսաստանին՝ նեղուցները հանում է գերմանական զինուորական միսսիայի անօրէնութիւնից։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ՝ լուրերի համաձայն՝ շուտով հրաժարվելու է ռուսաց դեսպանը թիւրք-ռուսական համաձայնութեան անաջողութեան պատճառով։

◆ Անգլիան ձեռք բերելով թիւրքիայից կօնցեսիա շահագործելու նաւթաբեր հողերը Արաբիայում, Միջագետքում և Սիրիայում միևնոյն ժամանակ կարողացաւ երկու անգլիացու մտցնել Բաղդադի երկաթուղու վարչութեան մէջ։ Կովէյտի սահմանները ընդլայնվելու են։

◆ Կ. Պոլսում թիւրքաց մինիստրների խորհուրդը Հալաճեան էֆէնդիի մասնակցութեամբ զբաղված է թիւրքաց ֆինանսները կարգի բերելու և եկամտի նոր աղբիւրներ որոնելու աշխատանքով։ Պաշտօնեաների ռոճիկները չեն տրվում 5 ամսից աւելի։

◆ Անգլիական հասարակական կարծիքը միաբերան ողջունում է Կ. Պոլսի ռուսաց դեսպանի հանդէս գալը գերմանական զինուորական միսսիային թիւրքիայում արտակարգ իրաւունքներ տալու դէմ։ Ֆրանսիան և Անգլիան ջերմ պաշտպանութիւն են ցոյց տալիս Ռուսաստանի քայլին։

◆ Թէհրանում լոյս տեսնող դեմօկրատական օրգանը թիւրքիայի և Պարսկաստանի միջև քաշված նոր սահմանը գտնում է շահաւէտ միայն Ռուսաստանի համար։ Սահմանը ապահովում է Անդրկովկասը թիւրքիայի ագրեսիվ գործողութիւններից։

◆ Կօկօվցեվը Ղրիմից վերադառնալուց յետոյ կաբինետի փոփոխութիւնների մասին տարածված լուրերը Պետերբուրգում դադարեցին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(М. 38814) 5—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1914 թ.
ՄԱԽԼԱՍ
Իւմօրիստիկ-երգիծական պատկերազարդ
ԾԱԲԱԹԱԹԵՐԹԻ,
որը լոյս է տեսնելու դեկտեմբերի սկիզբներին.
Շաբաթաթերթը հրատարակվելու է կարող ոյժերի անմիջական հսկողութեամբ։
ԲԱԺՆԵԳԻՆՆԷ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ	ԹԻՖԼԻՍԻՑ ԴՈՒՐՍ
Տարեկան. . . . . 4 ռ.	Տարեկան. . . . . 5 ռ.
Կէս տարին . . . . . 2 ռ. 50 կ.	Կէս տարին . . . . . 3 ռ.

«ՄԱԽԼԱՍԻՆ» սկզբից բաժանորդագրվողները դեկտեմբերի համարները կը ստանան ձրի։
Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала «МАХЛАСЪ», Петхаинская ул. № 20.
(հ.կ.) 1070. 3—3 Խմբ.-հրատ.՝ տիկ. ՍԱՖԵՆԻԿ ԼԱՇԵՎԱՐԵԱՆ

Մի կին, որ չէ վախենում պառաւութիւնից

ՄԻ ՏԵՂԵԱԿ ԿՆՈՋԻՑ

«Ես հաւատացած եմ, որ կանանց մեծ մասը կարող է պահպանել իր երեսի թարմ գոյնը երեսուն տարի աւելի, քան այժմ է,—գրում է տ. դէ-Վիլ՝ որ մասնագէտ է կաշու խնամատարութեան գործում։—Վատն այն է, որ կանայք չը գիտեն թէ ինչ կերպ խնամք տանեն։ Ինձ շատ հետաքրքրական է իմանալ, թէ լսե՞լ էք երբէք «թափանցման պրոցէսսի» մասին։ Դա մի շատ հասարակ միջոց է։ Նա կայանում է նրանում, որ փորձէք հեռացնել ձեր երեսի խուռնացած, թորշոմած և բծերով ծածկված կաշին ու երևան հանէք այդօրինակ կաշու տակ թաքնված գեղեցիկ, վաւրուն և թարմ կաշին։ Այդ նպատակով ժամանակակից կիները գործադրում է քիչ քանակութեամբ կիսաթունդ Դէքմօզոն, Դ-ր Մէյէրի, որպիսի դեղը քսվում է երեսին որպէս կրէմ-կրէմ, մի քանի գիշեր։ Մօտ 30 գրամ բաւական է համարվում։ Դա անվնաս և անպայման անխորժելի դեղ է, որը կարելի է ձեռք բերել համարեա ամեն մի դեղատնից։ Այդ դեղի նպատակն է ստիմանաբար, անկասելի կերպով, մաշեցնել երեսի անկենդան և տգեղ կաշին։ Առողջ հիւսուածքների վրա նա երբէք ոչ մի ազդեցութիւն չէ անում, նրա ներգործութիւնը, ընդհակառակը, կենդանարար հետևանքներ է ունենում։ Նրան գործածելուց մի քանի օրվայ ընթացքում նկատելի են լինում աչքի ընկնող առաւելութիւնները։ Իմանալով այդ մասին, ես համարեա թէ միանգամայն թողել եմ իմ երկիւղը ծերութիւնից։

Նոյնպէս կարելի է վարվել նաև ճաքճքված, կոշտ և կարմրած ձեռքերի վերաբերեալ եւ որովհետև այդ միջոցը հասարակ է, էժան և աջողութիւն ունի, դրա համար և հասարակութեան լայն շրջաններում ընդունված է որպէս սրբված դեղ։ Կատարեալ աջողութեան հասնելու համար՝ դեղը գործադրելուց առաջ պիտի լուացվել տաք ջրով ու չէզոք սապօնով և լաւ սրբվել։

Տեղեկութիւնների համար կարելի է դիմել՝ С.-Петербургъ, почт. ящ. № 371.
(П. 144540) 1—1

Զափահասների համար

Բժշկ. Փէլոդէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Դաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւերը), բազմաթիւ բէջէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սաւսուակ) և նրա բժշկութիւնը» բէջէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կ.։
3) «Միջադի տկնոր», ծիծաղ աշխարհի անեկդոտներից, Մոլլայի ընտիր առակներ և ժողովածու. տիկորի նկարը գրքի երեսին՝ խիստ ծիծաղաշարժ։ Գինը 20 կ.։
4) «Միհրնոյն գազազում», պատմ. վեպ՝ հայ թուրքական կռիւներից. գիպկների նկարներով Գինը 7 կ.։
5) «ԲաՀՀի կենսագրութիւն Գր.», պատկերով գինը 10 կ.։

Այս բոլոր գրքերը միասին պահանջողներին ձրի ուղարկում եմ «Կենիկարմտի օպրարը» ծիծաղաշարժ վոդեվիլը։ Գրքերի գինը և ճանապարհածախքի համար 17 կոպ. մարկաներ առաքել։
Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Ա. Գ Եսայեանը.
(հ. կ.) 44. 1(—72

„ՄՇԱԿի" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

L. SOLUSOՅԻ հետեւեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրբատեանի . . . . . 30 կ.
2) ԿՕՆՑՈՒՑԻՈՍ (Զինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տոստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրբատեանի . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՄԵԴԻ, ընտրված Լ. Տոլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆԶՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻՆ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . . 10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջին մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10 % զեղչ և ճանապարհածախքը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չէ լինիլ։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(3) 10—1


ՀԱԶԻԱԳԻՒՏ ԴԷՊՔ
ԿԸ ՀՄԱՑՎԷՔ

տեսնելով մեր առարկաները և կը զարմանամ՝ թէ որքան էժան գներ ենք նշանակել, երբ համոզվէք մեր ապրանքի լաւ յատկութեան մէջ։

ՄԻԱՑՆ 4 Ր. 95 ԿՕՊԵԿՈՎ, ուղարկում ենք արժէք. ի օգտ. առաքման։ Գրքերի հետևեալ դասընթացը. 1) բպանի գեղ. ժամացոյց, մօտալն, սև պողպատից, **cuas տափակ**, լարումը կոթից՝ 40 ժամը մի անգամ, անկէր. իսկ-ընթացքով. քարերով, կամ թէ կանացի ցիլինդր. ժամաց., մինչև բոպէները ստուգված **անպայմանն ուղիղ ընթացքով**, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ 2) Մոտային ձեռ. շղթայ՝ երկշարք, «Ռուբլէ» իսկ. մետաղից, էլեգանտ ձև։ 3) Ջատ հետաքրքր. բրելոկ։ 4) ժամաց. համար զամբաղ քսուկ։ 5) բատատմ. կաշուց պրատմնէ 6 բաժ. և մեխ. փականով, պարիկեան շքեղ չինուածք 6) Պատուհէ կինի՝ ապատրոյի անուն-հորանուն-ազգանունով։ 7) ժամաց. զոդերից պաշտպանող իր։ 8) Թատր. բինօկլ, էլեգանտ շինուածք. ոսկրատատ. 4 ապակիով, որ ցատեցնում է նրերը ամենահեռու տարածութ. վրա։ 9) Խոշորացոյց—կենդանի պատրատմ, որ ցոյց է տալիս միանգամայն բնական կերպով։ 10) Վեց հատ ամենահետաքրքիր պատկերներ խոշորացոյցի համար։ 11) Քշեղ ընծայ կանանց համար, որ բաղկացած է գուրբէ ոսկուց շինված մատանուց՝ ֆրանս. ադամանդներով, բրօշկայից և մի զոյգ օղերից։ 12) Ցն. ապատն՝ որ պարունակում է մօտ 120 կուսչուկէ տառեր և թուանշաններ. անհրաժեշտ իր ամեն մի տան համար։ 13) Դրպանի շատ յարմար պրիրոր նիկէլից։ 14) բպանի նէպէ օէր՝ 4 հետաքրքր. առաք.։ 15) ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹ! Ռէվոլվէր—դրպանի մշտական վառելիք։ 16) Գեղապատ. հետաքրքիր գրքոյկ, որ պարունակում է մօտ 100 նորագոյն փոխանակներ։ **Ամբողջ գարնիտուրի գին՝ 4 ռ. 95 կ., իսկ 2 գարնիտուրը՝ 9 ռ. 30 կ.**։ Լրացնող գարնիտուրը ամեն նարաձեր յատկ. առաք.—5 ռ. 70 կ., 2 հատը՝ 10 ռ. 80 կ.։ Իւրաքանչիւր գարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 ռուբլի թանգ։

Խորհուրդ ենք տալիս բերել տալ լաւ տեսակը, որովհետև գնի մէջ զանազանութիւնը շատ քիչ է, իսկ յատկութեան մէջ զանազանութիւնը շատ։ Ուղարկում ենք վերադիր վճ. և առ. կանխավճարի։ Ճանապարհածախքը 45 կ.։ Գրքերը՝ 80 կ.։
Հասցէագրել՝ Т-во «ПАТЕНТЪ». Варшава, Св. Креста отд. 124.
(18, 28) (В. 64509) 3—3

Լոյս տեսաւ եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ
1914 թ.
„ՇԻՐԱԿ"
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
XVI տարի
300 պատկ.—ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ.—300 պատկ.

Պատի օրացոյցի առաջին երեսների վրա տպագրված են հայ և օտար, հին և նորագոյն հեղինակների և գործիչների պատկերները թւով 300։ Ամբողջ պատկան և գրականական հիմնարկութիւնները ապատ են պարապմունքից. առանձին նշանակված են պատի պարապմունքի ժամերը և պատի բոլորովին փակ օրերը։ Իւրաքանչիւր երեսի վրա տպագրված են **ԱԾՕՐԻՔՄՆԵՐ, ԸՆՏԻՐ ՄՏԻՐ, ԱՌԱԾՆԵՐ, պատմական դէպքերի ժամանակագրութիւն, բանաստեղծական բառեակներ, մեծ մասամբ իրանց հեղինակների պատկերներով**։ Երկրորդ երեսների վրա տպագրված են՝ գիտական նորութիւններ, բնութեան երևոյթների նկարագրութիւններ, հայկական տների պատմական բացատրութիւններ, հեքիաթասական ասոյներ, բժշկական զգուշութիւններ, առողջապահական խորհուրդներ, ազգագրական տեղեկութիւններ, զուարճալի պատմուածքներ, պատմական նշանաւոր դէպքեր հայ, ռուս և այլ ազգերի կեանքից, վիճակագրական թւեր և տեղեկութիւններ, խորհրդածութիւններ և կենսագրութիւններ նշանաւոր անձանց. բանաստեղծութիւններ, աշուղական խաղեր, զուարճալի անեկդոտներ մեծ մարդկանց կեանքից։ Գիւղատնտեսական նորութիւններ, տնային տնտեսութեան վերաբերեալ կարեւոր խրատներ։ Ժողովրդական երգեր, երգիծաբանական հատուածներ, ծիծաղաշարժ առակներ, առածներ, և այլն։

Տախտակը պատրաստված է լիթոգրաֆիայում 10 գոյնով. 1) Աւարայրի զիւցազները—Վարդան Մամիկոնեան և Վահան Երէց, 2) Անմահ Խաչատուր Աբովեանի յուշարձանը, ըստ արձանագրած Տէր-Մարուքէանի, որի բացումը տեղի է ունենալու 1914 թ. Երևանում. 3) Մայր Հայաստան. 4) Հայի ակնկալած յոյսը։ Բոլոր պատկերներն էլ հայ ընտանիքի համար սիրելի ու պաշտելի դէպքեր։

Պատի օրացոյցի թերթերը ամրացված են, անքեալ տարվայ նման, թիթեղեայ կապով (жесть). Թերթերը ծակոտված են հեշտ պոկելու համար։

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ
(Հարուստ երազանքով)

Ցաւելուածը պարունակում է **Տօմարական գիտելիքներ.**—Տեղեկատու.—Պօստ և հեռագիր, խնայողական գանձարաններ, բնակարանի հարկ, նօտարների և դատական պրիստաների վարձատրութեան չափը, գրաշրջանթերթեր, մաւրակներ, չափ և կշիռ, դրամներ և արժէքաւոր թղթեր, կասկ կազմելու օրէնքներ, հարկի և պայմանագրի օրինակներ։ **Բանաստեղծական.**—Մի զոյգ՝ Լ. Տոլստոյի, Խլղեր՝ ռուսերէնից, Դատ և բանաստ՝ Կարմիր Տէտմատներից, Կոյրի ուխտագնացութիւնը՝ Օ. Տէր-Աւագեանի, Մանձարարոյը՝ Ֆրանսերէնից։ **Գիւղատնտեսական.**—Մեղուաբուծական կանոններ, թռչնաբուծութիւն, անասնապահութիւն (անասնաբուծական գիտելիքներ)։ **Կօսմետիկա.**—Սպասողական և վարկի կօսմետիկա։ **Գիտական.**—Փոքրիկ զրոյցներ.—Մատենական բժշկութիւն, քիմիան և մատնոցութիւնը, մատնոցութեան ոյժը, անգիտակցական ոգին (հրաղների բացատրութիւն)։ **Առողջապահական.**—Անմաքրութեան չարիքները, թոքախտ և ամուսնութիւն, գարեջրի օգտակարութիւնը, երկարակեցութիւն, առողջական, հիւանդապատների տասնարամեանները, երկարակեցութեան 17 կանոններ, վաղահաս մահն արգելել, կեանքը երկարելու և կարճելու պատճառները։ **Բժշկարան** զանազան հիւանդութիւնների համար։ **Աջողութեան գաղտնիք.**—Միշտ հանդիսող ու հատատուն, աշխատանք և խնայողութիւն, հարստութիւնից օգտվելու եղանակը, միլիոնատէրերի կարծիքը հարստութեան և հարստանալու միջոցների մասին, մարդ միայն փողով չէ երջանիկ։ **Մեր կորուստներ 1913 թվին.**—Բժ. Ալ. Ղազարեան, Գ. Բարխուդարեան, Ե. Տէր-Մարկոսեան, Ս. Զաւարեան, Ալ. Քալանթար, Կ. Խատիսեան (կենսագրական ակնարկ իրանց պատկերներով)։ **Օրեկեանները 1914 թվին.**—Լազարեան ճեմարանի 100-ամեակը—Լազարեան տոհմի պատմութիւնը պատկերներով, Էջմիածնի ճեմարանի 40-ամեակը—Գէորգ Դ. կաթողիկոսի գործերը, պատկերներով, Առաքելոն գրական գործունէութեան 25-ամեակը։ **Հայկական հարցը** և Պօլսոյ նուազաց փաշա, կենսագրականով։ **Ընտիր մտիր եւ ածիրգմներ.**—**Հարուստ երազահան.**—**Դերազնութիւն.**—Գրքից ճանաչել մարդու բնաւորութիւնը. **Դիմագուշակ**—գէմքից որոշել մարդու բնաւորութիւնը, բախտաւոր օրեր ամուսնութիւնն. լուսնի երազոյցոյց։ Հանելուկներ և խնդիրներ, վիճակարան։ Երեսների թիւը—320։

Գները՝ Պատինը—50 կ., Ծոցինը 20 կ.։ Գումարով գնողներին զեղչ։ Վերադիր վճարով պահանջողները պէտք է ուղարկին կանխավճար։

Դիմել՝ Александрополь, типографія «ШИРАКЪ» Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandrople, Karapet Apinian (Caucase).

Ցանկացողները օրացոյցների բովանդակութիւնն առանձին տպագրված թերթով կարող են ստանալ ՁՐԻ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный